ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 24-Ա

«10» մայիսի 2018 թվական գյուղ Ամասիա

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՐԵԳՆԱԴԵՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 4-ի թիվ 66 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում (բնակավայր՝ Արեգնադեմ) հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով հողամասի նպատակային նշանակությանը փոփոխությունը, որով նախատեսվում է՝ համայնքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի **0.30000** հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 08-018-0125-0001) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում պետական ծրագրի շրջանակներում կառուցվելիք հանրակրթական դպրոցի շենքի նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու և անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքները պետական գրանցման ենթարկելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանին՝

1) ապահովել սույն որոշումից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 8	*Դեմ՝ 0*	*Ձեռնպահ՝ 0*
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝			
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝			
ՍԵՐՈԲ ՂՈՒԿԱՍՅԱՆ՝			
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝			
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝			
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝			
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝			
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«10» մայիսի 2018 թվական
գյուղ Ամասիա